

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/8

23 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ԳՈՒԲՀ» ՍՊԸ դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 19.11.2014 թ-ի թիվ 0270207 որոշման դեմ:

«ԳՈՒԲՀ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

11.11.2014 թ-ին «ԳՈՒԲՀ» ՍՊԸ տնօրենը (այսուհետ նաև գանգատաբեր) ծանուցում է ստացել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ իրավաբանական և հարկադիր գանձումների բաժինը, 19.11.2014 թ-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու և որոշում կայացնելու գործընթացին մասնակցելու վերաբերյալ:

19.11.2014 թ-ին հարուցվել է վարչական վարույթ և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով կիրառվել է տուգանք 20.000 դրամի չափով՝ 2014 թ-ի 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար: Մինչդեռ, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169 հոդվածի 2-րդ մասով նախատեսված է տուգանք սկսած 10.000 դրամից, որի հետ գանգատաբերը համաձայն չէ հետևյալ պատճառներով:

«ԳՈՒԲՀ» ՍՊԸ-ի կողմից 2014 թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկ-հաշվետվությունը ներկայացվել են 11.10.2014 թ-ին՝ եկամտային հարկի ամփոփ հաշվարկի հետ միասին, սակայն հանձնված հաշվետվություններ բաժնում ամսաթիվը ցուցադրված է եղել 31.10.2014 թ-ին, ինչի կապակցությամբ գանգատաբերը դիմել է էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգը սպասարկող կառույցին, սակայն վերջիններս գրավոր բացատրություն ներկայացնել հրաժարվել են:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ տեխնիկական խնդրի առկայության պատճառով գանգատաբերի ներկայացված հաշվետվությունը ժամկետանց է համարվել, որն ի դեպ 0-ական է, քանի որ ընկերությունը սկսած 01.05.2014 թ-ից գործունեություն չի իրականացնում: Հարկ է նշել նաև, որ 19.11.2014 թ-ին նշանակված վարչական վարույթին մասնակցելու նպատակով, իմ փոխարեն վարչական մարմին է ներկայացել գանգատաբերի կողմից պատշաճ լիազորված անձ՝ Լուսինե Սահակյանը, սակայն էրեբունու ՀՏ իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնի պետը առոչինչ է համարել լիազորագիրը՝ լիազորված անձին արգելել է առարկություն ներկայացնել և պահանջել է պետական ռեգիստրի վկայական, ինչը անհասկանալի է: Բացի այդ, էրեբունու ՀՏ պետը որպես փաստարկ պահանջել է հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգը սպասարկող ընկերությունից գրավոր բացատրագիր, ինչը վերջիններս հրաժարվում են ներկայացնել, թեև չկա գեթ մի հիմնարկ, որը առնչված չլինի այս համակարգի աշխատանքի անկատարության հետ:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 19.11.2014 թ-ի թիվ 0270207 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԳՈՒԲՀ» ՍՊԸ կողմից 2014 թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ պարբերության հատկանիշներով ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 19.11.2014 թ-ի թիվ 0270207 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «ԳՈՒԲՀ» ՍՊԸ կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված 2014 թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկի վրա կատարված գրառման համաձայն, էլեկտրոնային ստորագրությունն ընկերության տնօրենի կողմից դրվել է 30.10.2014 թ-ին: Նշված փաստը հիմնավորում է այն հանգամանքը, որ գանգատաբերի պնդումները՝ 2014 թ-ի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը եկամտային հարկի ամփոփ հաշվարկի հետ միասին 11.10.2014 թ-ին ներկայացված լինելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Քննարկվող դեպքում «ԳՈՒԲՀ» ՍՊԸ տնօրենի կողմից թույլ է տրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ պարբերության հատկանիշներով նախատեսված զանցանք, որի համար ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 19.11.2014 թ-ի թիվ 0270207 որոշմամբ կիրառվել է նույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 19.11.2014 թ-ի թիվ 0270207 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ